



891.715

Գ-83

Մ. ԳՈՐԿԻ

ԱՐԻՍՏԻՊ ՊԱՊԸ

ՅԵՎ.

ԼՅՈՒՆԿԱՆ

-6 NOV 2011

891.715

Մ. ԳՈՐԿԻ

Գ-83

Այ

ԱՐԽԻՊ ՊԱՊԵ
ՅԵՎ
ԼՅՈՆԿԱՆ

Թարգմ. Հ. Տ. Ա. Պ. Գ. Յ. Ա. Ն.

Նկարներ
Բ. Գելսերթովի

1010
41241/6



ՊԵՏԱԿԱՆ
ՀԱԿԱՑՄԱՆ ԿԿ ԿԻՑ ՄԱՆԿԱՊԱՏԱՆԵԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԲԱԺԻՆ
ՅԵՐԵՎԱՆ
1937

Տեխ. Խմբագիր՝ Լ. Ռ հ ա ն յ ա ն
Մրբագրիչ՝ Ռ. Ն ո ւ ն յ ա ն

Գլավիտի լիազոր Կ-4461, Հրատ. 3936
Պատվեր՝ 148, Տիրաժ 3000
Գետնատի տպարան, Յեղեան, Ա Կնունյանցի

5018

Սպասելով լաստին, նրանք յերկուսով պառկեցին գետափի դարավուլի ստվերում և յերկար լուսնայում եյին իրենց վոտքերի տակ հոսող Կուբանի արագընթաց և պղտոր ալիքներին։ Լյոնկան նիրհեց, իսկ Արխիպ պապը, մի բութ ձնշող ցավ զգալով իր կրծքում, քնել չեր կարողանում։ Գետնի մութ-դարչնագույն ֆոնի վրա հազիվ աշքի եյին ընկնում նրանց զզզզված և կծկված կերպարանքները՝ յերկու խղճուկ կծիկների նման, — մեկը մեծ, մյուսն ավելի փոքր։ Հոգնած, այրված և փոշոտ դեմքերը նույն գույնն ունեյին, ինչ վոր գորշակար-միր ցնցոտիները։

Արխիպ պապիկի վոսկը և յերկար մարմինը ձգվել եր ավագի նեղ շերտիկի լայնությամբ, — ավազը զեղին ժապավենի պես ձգվում եր գետափի յերկարությամբ՝ դարավուլի և գետի միջև, — նիրհող Լյոնկան կծկել եր պապի կողքին։ Լյոնկան փոքրիկ եր ու դյուրաբեկ։ Իր ցնցոտիների մեջ նա նման եր մի անձունի վոստի, վորը կոտրել եյին իր պապից, իսկ պապն իր հերթին նման եր մի հին չորացած ծառի, վոր գետի ալիքները բերել եյին ու դուրս նետել այլտեղ, ավազի վրա Պապը, գլուխը արմունկի վրա բարձրացրած նայում եր դիմացի ավին, վոր վողողված եր արևով և յեղերապատած ուռուտի ցանցառ թփերով։ Թը-

փերից դուրս եր ցցված լաստի ոև յեղը: Այնտեղ
ձանձրալի եր ու դատարկ: Ճանապարհի գորշ շեր-
տը հեռանում եր գետից գեպի դաշտի խորքը: Այդ
ճանապարհն ինչ-վոր չափազանց ուղիղ եր, չոր, և
վհատություն եր առաջ բերում:

Նրա, ծերի աղոտ ու բորբոքված աչքերը,
իրենց կարմիր, ուռած կոպերով, անհանգիստ թար-
թում եյին, իսկ կնճիռներով ակոսված դեմքի վրա
սառել եր տանջող ձանձրույթի արտահայտությու-
նը: Նա հաճախակի զսպված հազում եր և, յերբեմն
նայելով իր թոռին, ձեռքով ծածկում եր բերանը:
Հազը խոպոտ եր, խեղդող, և ստիպում եր պապին
բարձրանալ գետնից և արցունքի խոշոր կաթիլներ
եր հոսեցնում նրա աչքերից:

Բացի նրա հազից և այն կամացուկ շրջունից,
վոր հանում եյին ալիքները, բաղխվելով ավագին,
դաշտում վոչ մի ուրիշ ձայն չկար... Այդ դաշտն
ընկած եր գետի յերկու կողմում, հսկայական, գոր-
շակարմիր, արևից այրված, և միայն այնտեղ, հե-
ռու հորիզոնի վրա, վոր հազիկ նշմարում եր ծերն
իր աչքերով, ճոխ ալեկոծվում եր ցորենի վոսկե-
ծովը, և ուղիղ նրա մեջ եր վայր ընկնում շլացու-
ցիչ պայծառ յերկինքը: Այդ յերկնքի վրա նկար-
վում եյին հեռավոր բարդիների բարեկազմ կեր-
պարանքները: Թվում եր, թե նրանք մերթ փոք-
րանում են, մերթ ավելի բարձրանում, իսկ յեր-
կինքն ու նրա տակ փռված ցորենը, տարութերվում
են, բարձրանալով և իջնելով: Յեվ հանկարծ այդ
բոլոր թագնվում եր դաշտային մովի փայլուն,
արծաթյա շղարշի յետելը...

Այդ շղարշը, - հոսանուա, պայծառ և խափու-
սիկ, - գալիս եր հեռվից և գրեթե հասնում գետի
յեզերքին և այդ ժամանակ նա ինք կարծես դառ-
նում եր մի գետ, վոր հանկարծ թափել եր յեր-

կընքից և նույնքան ջինջ եր ու հանգիստ, վորքան
այդ յերկինքը:

Այդ ժամանակ Արխիպ պապը, անծանոթ լի-
նելով այդ յերեսույթին, տրորում եր աչքերն ու
տաղտկությամբ մտածում ինքն իրեն, վոր այդ
շոքն ու դաշտը խորում են նաև նրա տեսողությունը,
ինչպես խլել եյին նրանից իր վորքերի ուժը:

Այսոր նա իրեն ավելի վատ եր զգում, քան
յերբեկցե վերջին ժամանակը: Նա զգում եր, վոր
շուտով պիտի մեռնի և, թեև միանգամայն սառ-
նասիրտ եր վերաբերվում դրան, առանց մտածե-
լու, ինչպես անհրաժեշտ պարհակի, բայց նա կու-
գենար մեռնել հեռու, վոչ այստեղ, այլ հայրենի-
քում, և բացի այդ, նրան սաստիկ մտահոգում եր
իր թոռը: Առ կգնա Լյոնկան...

Նա որական մի քանի անգամ գնում եր այդ
հարցն իր առաջ, և միշտ ինչ վոր մի բան սեղմ-
վում եր նրանում, սառչում, և այնքան անտանելի
դառնում այդ միտքը, վոր նա ուզում եր իսկույն
և յեթ վերագանալ տուն, Խուսաստան...

Բայց հեռու և Ռուսաստանը... Միևնույն ե,
տեղ չես հասնի, կմեռնես վորեւ. տեղ ճանապար-
հին: Այստեղ, Կուրբանում, առատ վողորմություն
են տալիս: Ժողովուրդն ունեուր ե, թեև ծանր ե ու
ծաղրող: Չեն սիրում մուրացկաններին, վորովհե-
տև հարուստ են...

Հառելով թոռանն արցունքից խոնավացած իր
հայացքը, պապն զգուշորեն կոպտացած ձեռքով
շոյեց նրա գլուխը:

Լյոնկան շարժվեց ու նայեց նրան իր մեծ,
խորը, վոչ մանկական մտածկոտությամբ լի կա-
պույտ աչքերով, վոր ավելի մեծ եյին թվում նրա
բարակ, անարյուն շրթունքներով ու սուր քթով,
նիհար, ծաղկատար յերեսին:

— Գալիս ե, — հարցրեց նա և, ձեռքը պահած աչքերի վրան, նայեց գետին, վորի մեջ արտացում եր արեգակը:

— Զե, դեռ չի գալիս: Կանգնել ե: Ի՞նչ ունի եստեղ: Վոչ վոք չի կանչում, դրա համար ել կանգնել ե... — զանդաղ խոսեց Արխիպը, շարունակելով շոյել թոռան գլուխը: — Քնած եյիր:

Լյոնկան անորոշ շարժեց գլուխն ու ձգվեց ափազի վրա: Նրանք լուս եյին մի պահ:

— Յես վոր լող տալ իմանայի, կլողանայի, — ուշադրությամբ նայելով գետին, հայտարարեց Լյոնկան: — Ինչ արագընթաց ե ես գետը: Մեզ մոտ եսպես գետեր չկան: Ինչ ե քրքրում: Վազում ե, ասես վախենում ե ուշանա...

Յեվ Լյոնկան դժգոհ շրջեց յերեսը ջրից:

— Այ, թե ինչ, — խոսեց պապը, մի փոքր սիտք անելուց հետո, — արի գոտիներս արձակենք, կապենք իրար, հետո կկապեմ վոտիցդ, և դու մտիր, լողացիր...

— Բան ասաց, — առարկեց Լյոնկան: — Ինչ մըտածեց: Ի՞նչ ե, կարծում ես ջուրը քեզ ել չի՞ քաշի տանի: Յերկսով ել կիսեղդվենք:

Ճիշտ վոր, ե, կքաշի: Տես, հալա, վոնց ե զոռում... Բա գարնանը տեսնես, վոնց ե շատանում — չտեսնված: Ինչ ել ցանքսեր կան ետեղ՝ ել մի ասա, ցանքսերին վերջ չկա:

Լյոնկան չեր ուզում խոսել, և նա պապի խոսքերը թողեց առանց պատասխանի: Նա վերցրեց ձեռքը չորացտծ կափի մի կտոր ու սկսեց տրորել, փոշիացնել մատների մեջ, պահպանելով դեմքին լուրջ և կենտրոնացած արտահայտությունը:

Պապը նայում եր նրան և, աչքերը կկոցելով, մտածում ինչ վոր բանի մասին:

— Հալա մի տես... — կամաց ու միորինակ խո-

սեց Լյոնկան, թափ տալով փոշին ձեռքերից: — Ես հողը, հիմա... վերցրի այն ձեռքս, արորեցի, և դառափ փոշի... մանր, մանր կտորներ միայն, հազիվ աչքիդ յերեսում են...

— Հետո ի՞նչ, — հարցրեց Արխիպն ու հազաց, աչքերից դուրս յեկած արտասուքի միջով նայելով թոռան խոշոր, չոր, փայլուն աչքերին: — Ինչի՞ համար ես եղ ասում, — ավելացրեց նա, յերբ հազն անցավ:

— Ենպես... — թափ տվեց գլուխը Լյոնկան: — Նրա համար, վոր, իբր, մի տես վոնց բան ե ես հողը, — նա ձեռքը թափ տվեց գեպի գետի այն կողմը: — Ել ի՞նչ ասես չեն շինել նրա վրա... Ինչքան քաղաքներ ենք ման յեկել քեզ հետ... թիվ չկա: Բա ինչքան մարդիկ կան ամեն տեղ:

Յեվ, չկարողանալով վորսալ իր միտքը, Լյոնկան նորից լոեց ու մտքի մեջ ընկափ, նայելով իր շուրջը:

Պապը նույնպես մի պահ լուռ մնաց և հետո, քիփ մոտենալով թոռանը, ասաց փաղաքորեն՝

— Խելքի ծնվ ես դու, ճիշտ ասացիր դու — փոշի յե ամեն բան... Քաղաքներն ել, մարդիկ ել, յես ու դու ել, — փոշի յենք վոր կանք: Են, Լյոնկա ջան, Լյոնկա... Ինչ կլիներ գիր իմանայիր... շատ առաջ կզնայիր: Վհնց կլինիք քո ճարը...

Պապը կրծքին սեղմեց թոռան գլուխն ու համբուրեց այն:

— Սպասի... — ազատելով իր վուշե մազերը պապի անձոռնի դողդոջյուն մատների մեջից, մի փոքր աշխատմացած, բացականչեց Լյոնկան: — Վհնց ասիր դու: Փոշի: Քաղաքներն ել, ամեն բան:

— Դե եսպես ե ստեղծել աստված, գառը ջան: Ամեն բան, — հող ե, ինքը յերկիրն ել փոշի յե: Յեվ բոլորը մեռնում են նրա վրա... Այ, թե վոնց:

Դրա համար ել մարդը պիտի ապրի չարչարանքով և խոնարհ։ Այ, յես ել շուտով կմեռնեմ...— փոխեց պապն ու կսկիծով ավելացրեց՝ բա, ուր կզնաս դու առանց ինձ։

Լյոնկան հաճախ եր լսում պապից այս հարցը, նա արդեն ձանձրացել եր խոսելու մահվան մասին, լուռ շուռ յեկավ մի կողմ, պոկեց սեզը, դրեց բերանն ու սկսեց դանդաղ ծամեր։

Բայց դա պապի ցավոտ տեղն եր։

— Հը, ինչու սուս արիր։ Բա, իբր, վոնց պիտի անես դու առանց ինձ, — կամաց հարցընց նա, կուանալով գեպի թոռը ու նորից հազարով։

— Շատ եմ ասել, — ցրված ու դժգոհ արտասանեց Լյոնկան, կողքանց նայելով պապին։

Նրան դուր չեյին գալիս այս խոսակցությունները նաև նրանով, վոր հաճախակի դրանք կովով եյին վերջանում։ Պապը յերկար խոսում եր իր մահվան մոտենալու մասին։ Լյոնկան սկզբում լսում եր նրան կենտրոնացած, վախ եր զգում այդ պատկերացող արտասովոր դրությունից, լաց եր լինում, բայց աստիճանաբար հոգնում և չեր լսում պապին, նվիրվելով իր մտքերին, իսկ պապը, նկատելով այդ, բարկանում եր ու գանգատվում, վոր Լյոնկան չի սիրում պապին, չի գնահատում նրա հոգացողությունը, և, վերջապես, կշտամբում եր Լյոնկային, իբր թե նա ուզում ե, վոր պապը վորքան կարելի ե շուտ մեռնի։

Ի՞նչ ես սառել։ Խելը չունես դու գեռ, ի՞նչ ես հասկանում դու քո կյանքից։ Քանի տարեկան ես։ Հալա նոր մտել ես տասնըմեկի մեջ։ Ի՞նքո ել նվազ ես շատ, աշխատանքի անպետք։ Ել ուր պիտի գնաս դու։ Բարի մարդիկ կարծում ես, կոզնեն։ Այ, թե վոր փող ունենայիր, նրանք հոկոզնեյին քեզ մխսել — եղ եղակես ե։ Իսկ մուրաց-

կանություն անելն ենքան ել քաղցր բան չի, թե կուզ հենց ինձ, ծերիս համար։ Ամեն մարդու գըլուխ իջեցրու, խնդրիր ամեն մեկին, Հայհոյում են քեզ, ծեծում են մեկ մեկ, ու քշում... Հենց գիտես թե մուրացկանին մարդու հաշիվ են անում։ Վհչ մեկը։ Տասը տարի յե, ինչ ման եմ գալիս ամեն տեղ — գիտեմ։ Մի կտոր հացը հազար մանեթ արժի նրանց մոտ։ Տալիս ե ու մտածում, թե ուր վոր ե հիմի իր առաջ արքայության գոները կբացվեն։ Դու կարծում ես, ինչի՞ համար են շատ տալիս։ Վոր իրենց խիդճը հանկստացնեն, այ թե ինչի համար, բարեկամ, այլ վոչ խղճմտանքից։ Կխոթի ձեռքդ մի կտոր, իր ուտելն ել, հո, իր համար ամոթանք չի։ Կուշտ մարդը գազան ե։ Յեվ յերբեք նա չի խնդում քաղցածին։ Թշնամի յեն իրար — կուշտն ու քաղցածը, հավիտյանս հավիտենից նրանք փշի պես ցցված են իրար աչքի մեջ։ Դրա համար ել հնարք չկա, վոր նրանք իրար հասկանան։

Պապիկը վոգեորվեց չարությամբ ու կսկիծով։ Դրանից նրա շըթունքները դողդողում եյին, ծերացած աղոտ աչքերը շարժվում եյին թերթերունքների ու կոպերի կարմիր շրջանակների մեջ, կընձիռները մութ յերեսին ավելի խորացան։

Լյոնկան չեր սիրում նրան այդպես և մի փոքր ել վախենում եր ինչ վոր բանից։

— Այ, յես հարցնում եմ քեզ, վոնց կանես դու աշխարհի հետ։ Դու նվազ տղա յես, իսկ աշխարհը հո — գազան ե։ Ու կուլ կտա նա քեզ մի անգամից, իսկ յես չեմ ուզում եղ բանը... ախըր, սիրում եմ քեզ, բալա ջան։ Ինձ համար դու յես մենակ, յես ել մենակ եմ քեզ համար .. Բա ել վհնց պիտի մեռնեմ։ Ել ճար կա, վոր մեռնեմ, դու ել մնաս մենակ... Ով կնայի քեզ... տեր աստված... ինչու

դու եսպես աչքից գցեցիր քո ճորտին։ Ապրելու ել հնարք չկա, սեռնել ել չեմ կարող, նրա համար վոր — յերեխա յե — պահեմ պիտի, պահպանեմ։ Յոթ տարի պահել եմ, մեծացրել... իմ ես ծերացած ձնոքերիս վրա... Տեր, աստված, ովնիր ինձ։

Պապիկը նստեց ու լաց յեղափ, յերեսը դեմ անելով դողդոջուն ծնկներին։

Գետն շտապով գլորվում եր հեռուն, հնչեղ ճղփում եր ափերին, կարծէս ուզում եր այդ ճղղվյունով խլացնել ծերունուն հեկեկանքները։ Պայծառ ժալտում եր անամպ յերկինքը, ներքի թափելով այրող տոթը, հանգիստ ականջ դնելով պղտոր ալիքների աղմուկին։

— Հերիք լաս, պապի, — նայելով մի կողմ, դաժան տոնով ասաց Լյոնկան, և, յերեսը դարձնելով դեպի պապը, ափելացրեց՝ — ամեն ինչի մասին խոսել ենք արդեն, չե՞ Զեմ կորչի։ Կմտնեմ մի տեղ — պանդոկից բանից...

— Կսպանեն ծեծելով... — արտասուքների միջից տնքաց պապը։

— Գուցե և չսպանեն։ Բա, վոր չսպանեցի՞ն, — վորոշ ըմբոստությամբ բացականչեց Լյոնկան, — ի՞նչ կասես։ Թույլ կտամմ վոր, ամեն մարդու...

Բայց այստեղ Լյոնկան հանկարծ ինչ վոր պատճառով կտրեց իր խոսքն ու, լոելով մի պահ, կամացուկ ասաց՝

— Չեղափ, հո, վանք կզնամ...

— Այ, թե վոր վանք գնայիր, — հառաչեց պապը, աշխուժանալով, և նորից սկսեց կուչ գալ խեղդող հազի նոպայից։

Նրանց գլխի վերնը մի աղաղակ լսվեց և անիմսերի ճոնչոց...

— Լամատ, լաստ — հեյ, — ցնցում եր ողը ինչ վոր մեկի հզոր կոկորդը։

Նրանք թռան վոտքի, հավաքելով գետնից տոպրակներն ու փայտերը։

Խլացուցիչ ճոճուալով, ավազի վրա դուրս յեկավ մի սայլ։ Նրա մեջ կանգնած եր մի կազակ, վորը բրդոտ փափախը ծուել եր մի ականջի վրա ու, գըլուխը յետ արած պատրաստվում եր գոռալ, բաց բերնով ներս ծծելով ողը, վորից նրա լայն, դուրս բնկած կուրծքն ել ափելի յեր դուրս ընկնում։ Սպիտակ ատամները պայծառ փայլում եյին սև մորութի մետաքսե շրջանակում, վոր սկսվում եր արյունով լցված աչքերի տակից։

Արձակ շապկի և ուսերին անփույթ գցած չուխայի տակից, յերևում եր մազոտ, արևից սեացած մարմինը։ Յեկ նրա ամբողջ ամուր ու խոշոր կերպարանքից, ինչպես և մսոտ, խայտաբղետ և նույնպես այլանդակ խոշոր ձիուց, սայլի բարձր, հաստ դողերով պատած անիմսերից, — կշտություն, ույժ և առողջություն եր բղխում։

— Հեյ, հեյ...

Պապն ու թռող գդակները հանեցին գլխներից ու ցածր գլուխ տվին։

— Բարե՛ ձեզ, — թնդացրեց յեկվորն ու, նայելով մյուս ափին, վորտեղ թփերի միջից դանդաղ ու անշնորհք գուրս եր սողում սև լաստը, սկսեց ուշագրությամբ դիտել մուրացկաններին։ — Խուսաստանից եք։

— Ենտեղից ենք, ախաղեր ջան, — գլուխ տալով պատասխանեց Արխիպը։

— Սոված եք ենտեղ, համ։

Նա ցած թռավ սայլից գետին և սկսեց ինչ վոր մի բան ուզել լծասարքի մեջ։

— Ուտիճներն ել են սովից կոտորվում։

— Պատահ, ուտիճներն ել են կոտորվում։ Դեստա փշանք ել չի մնացել, ամբողջը կերել եք։

Լավ եք ուտում: 'Իե, ասենք, անպետք աշխատող
եք, յերեկի: Նրա համար, վոր թե լավ աշխատեցիր,
սով ել չի լինի:

— Եղտեղ, ախաղեր ջան գլխավոր պատճառը—
հողն ե: Զի բերում: Ծծել ենք մենք եդ հողը:

— Հնդր, — գլուխը թափ տվեց կազակը: — Հողը
միշտ ել կբերի, դրա հտմար ել տվել են հողը մար-
դուն: Ասա՝ չե թե հողը, այլ ձեռքերը: Ձեռքերն
են վատ: Լավ ձեռքերից քարն ել չի պրծնի, կբերի:

Մոտեցավ լաստը:

Յերկու առողջակազմ կարմրառեխ կազակներ,
հենվելով հաստ վոտքերով լաստի հատակին, դրբխ-
կոցով խփեցին այն ափին, տարուքերվեցին, զցե-
ցին ձեռքներից պարանն ու, նայելով իրար, սկը-
սեցին հևալ:

— Շնք ե, — բացեց ատամները յեկողը, քաշե-
լով լաստի վրա իր ձին ու ձեռքը տանելով դեպի
գդակը:

— Իմա, — պատասխանեց լաստավորներից մե-
կը, ձեռքերը խորը դրած շալվարի գրպանները,
և, մոտենալով սայլին, նայեց նրա մեջ ու հոտ
քաշեց, ուժգին ներս բաշելով ոդն իր մեջ: Մյուսը
նստեց հատակին և, տնքտնքալով, սկսեց հանել
կոշիկները:

Պապն ու Լյոնկան անցան լաստի վրա ու հեն-
վեցին յեզրին, աչք գցելով կազակներին:

— Իե, գնանք, — կարգադրեց սայլի տերը:

— Իսկ քեզ մոտ բան չկա խմելու, — հարցրեց
նա, վոր զննում եր սայլը: Նրա ընկերը հանեց
կոշիկն ու, աչքը կկոցցելով, նայում եր ճիտքի մեջ:

— Իման չկա: Ի՞նչ ե վոր, մի՞թե կուրանում
քիչ ջուր կա:

— Զուր... ջուրս վորն ե:

— Հը, արագ ես ուզում: Արագ չկա մոտա:



Պապն ու քոռը գդակները նանեցին գլխներից ու ցած գլուխ տվին:

— Եղ վհնց թե չկա, — մտքի մեջ ընկավ հարց-նողը, աշքերը հառած լաստի հատակին:

— Դե, դե, գնանք:

Կազակը թքեց ձեռքերի մեջ ու վերցրեց պարանը: Անցնողն սկսեց ոգնել նրան:

— Բա դու, պատ, ինչի՞ չես ոգնում, — դիմեց Արխիպին կոշիկի հետ գործ ունեցող լաստավորը:

— Իմ ի՞նչ բանն ե, ախտեր ջան, — խղճուկ տոնով և տարուբերելով գլուխը, յերգեց սա:

— Ասենք պետք ել չի ոգնել նրանց: Նրանք մենակ ել կհասցնեն:

Յեվ, կարծես թե ցանկանալով համոզել պապին իր խոսքերի ճշմարտությանը, նա ծանրորեն ծալեց ծնկներն ու պառկեց լաստի տախտակամածի վրա:

Նրա ընկերը ծուլորեն հայրոյեց նրան և, պատասխան չստանալով, ուժգին թփթփացրեց վոտները, դեմ անելով տախտակամածին:

Տարվելով հոսանքից, վոր խուլ աղմուկով ճղփում եր նրա կողերին, լաստը ցնցվում ու տարուբերվում եր, դանդաղ շարժվելով առաջ:

Նայելով ջրին, Լյոնկան զգում եր, վոր իր գլուխը պտտվում ե, և ալիքների արագ վազքից հոգնած աշքերը փակվում են քնկոտ: Պապի խուլ շնչոցը, պարանի ճոճոցը և ալիքների հյութալի ճողվյունը որոր եյին ասում նրան: Նա ուզում եր նստել տախտակամածի վրա՝ անձնատուր լինել քնին, բայց հանկարծ մի բան թափ տվեց նըրան այնպես, վոր նա ընկավ:

Աչքերը լայն բացած նա նայում եր շուրջը: Նրա վրա ծիծաղում եյին կազակները, ամրացնելով լաստը ափի վրա ցցված կիսասայրված կոճղին:

— Ի՞նչ ես քնել: Նվազ ես դու, Նստիր սայլը, ստանիցա տանեմ: Դու ել, պատ, նստիր:

Ծնորհակալություն հայտնելով կազակին շինծու խնարձության ձայնով, պապը տնքտնքալով բարձրացավ սայլի վրա: Լյոնկան նույնպես ցատկեց այնտեղ և նրանք գնացին շրջապատված սև փոշու քուլաներով, վոր ստիպում եր պապին շնչասպառ լինել հազից:

Կազակն սկսեց մի յերգ յերգել: Յերգում եր նա տարորինակ հնչյուններով, ընդհատելով նոտաները մեջտեղներում և շփացնելով վերջում: Թոփում եր, թե նա հնչյուններն արձակում եր կըծիկից, ինչպես թելը, և յերբ նա հանդիպում եր հանգույցի, կտրում եր այն:

Անիմիկները խղճալի ճոնչում եյին, բարձրանում եր փոշին: Փլուխը գողգողացնելով պապն անդադար հագում եր, իսկ Լյոնկան մտածում եր այն մասին, վոր հիմա կմտնեն նրանք ստանիցա և հարկ կլինի խղճուկ ձայնով յերգելու պատուհանների տակ՝ Տեր մեր Հիսուս Քրիստոս... Նորից ստանիցայի տղաները կսկսեն ձեռք սոնել նրան, իսկ կանայք ձանձրացնել հարց ու փորձ անելով Խուսաստանի մասին: Անհաճոյե նաև այդ ժամանակ նայել պապին, վորը հագում ե ավելի հաճախ, ավելի յե կոանում, վորից նա ինքն անհարմար և ցավ ե զգում, ու խոսում ե այնպիսի խղճալի ձայնով, հաճախ հեծկլտալով և պատմելով այն բաների մասին, վորը վոչ յեղել ե և վոչ ել պատահել: Ասում ե, վոր Խուսաստանում ժողովուրդը կոտորվում ե փողոցներում, և այնպես ել մնում ե, և մարդ չկա, վոր նրանց վերցնի, վորորհետև բոլոր մարդիկ շշմել են սովից... Վոչ մի այդպիսի բան վոչ ինքը, վոչ ել պապը չեին տեսել վոչ մի տեղ: Իսկ հարկավոր ե այդ բոլորը նրա համար, վոր շատ տան: Բայց այստեղ ի՞նչ պիտի անես այդ վողորմությունը: Տանը կարելի յե միշտ ել ծախել

քառասուն կամ հիսուն կոպեկով փութը, իսկ եստեղ փոչ փոք չի առնում: Հետո ստիպված են լինում այդ յերեմն համեղ կտորները դուրս նետել տոպ-ըակից՝ դաշտում:

— Հավաքելու պիտի գնաք, — հարցրեց կազակը, նայելով ուսի վրայով յերկու կուչ յեկած կերպա-րանքներին:

— Դե, իհարկե, հարգելի, — հառաչելով պատաս-խանեց Արխիպ պապը:

— Կանգնիր փոտքի, պահպ, ցույց տամ, վոր-տեղ եմ ապրում, — զիշերն ինձ մոտ յեկեք:

Պապը փորձեց վեր կենալ, բայց վայր ընկափ, խփելով կողքը սայլի յեղբին, ու խուլ տնքաց:

— Ե՞ս դու, ծերուկ, — մըթմըթաց կազակը խըղ-ճահարդած: — Դե միևնույն ե, մի նայիր, զիշերե-լու ժամանակը փոր յեկափ, հարցրու Չորսիին, Մնդրեյ Չորսիին, եղ յես ինքս եմ: Իսկ հիմա իջիր: Մնաք բարի:

Պապի ու թոռի իջած տեղը կային մի խումբ բարդիներ ու սև կաղամախիներ: Նրանց բների յետեից յերեսում եյին տանիքները, ցանկապատ-ները, ամեն տեղ — դեւլի աջ և դեպի ձախ — դե-պի յերկինք եյին բարձրանում նույնպիսի ծա-ռախմբեր: Նրանց կանաչ սաղարթը ծածկված եր գորշ փոշիով, իսկ հաստ, ուղղաձիգ բների կեղեր ճաքճքել եր շորից:

Ուղիղ մուրացկանների առջև յերկու հյուսած ցանկապատերի արանքում ձգվում եր նեղ փողոցը: Նրանք գնացին դեպի այդ փողոցը, վոտքով շատ ման յեկած մարդկանց յերերուն քայլվածքով:

— Դե, հիմի, Լոնյա, մենք վոնց կգնանք՝ — մի-ասին, թե ջոկ-ջոկ, — հարցրեց պապը և, չսպասելով պատասխանի, ավելացրեց՝ միասին, գուցե լափ

լինի, — շատ քիչ են տալիս քեզ: Ուզելու շնորհք չունես...

— Իսկ ինչի՞դ ե հարկավոր շատը: Միևնույն ե, չես կարողանում ուտել... — մոայլ պատասխանեց Լյոնկան, նայելով շուրջը:

— Ինչի՞ս ե հարկավոր... սարսաղ տղա... բա-վոր հանկարծ մեկը պատահի ու առնի: Այ քեզ՝ ինչիս ե պետք... փող կտա: Իսկ փողը մեծ բան ե: Փողը փոր ձեռիդ յեղափ, գլուխ կպահես, իմ մեռ-նելուց հետո:

Յեկ փաղաքշաբար քմծիծաղ տալով, պապը շոյեց թոռան գլուխը:

— Իսկ դու զիտես ինչքան եմ յես հավաքել ճանապարհին, հը՝:

— Ինչքան, — սառնասրտորեն հարցրեց Լյոն-կան:

— Տասնմեկ մանեթ ու կես... տեսնում ես: Բայց Լյոնկայի վրա տպակորություն չթողին այդ գումարն ու պապի ցնծալից տոնը:

— Այ, դու պստիկ, պստիկ. — ախ քաշեց պա-պը: — Դե, ջոկ-ջոկ ենք գնում, հա:

— Ջոկ-ջոկ...

— Դեհ... ժամի մոտ կլինեմ:

— Լափ:

Պապը թեքվեց դեպի ձախ նրբանցքը, իսկ Լյոն-կան շարունակեց ճանապարհը: Մի տասը քայլ ան-ցած, նա լսեց գողդոջուն բացականչությունը — «կենով կենդանի մնաք»: Այդ բացականչությունը լսելիս, թվում եր թե մեկը ձեռքով զարկեց խան-գարկած գուսլիի (տավիղանման գործիք) բոլոր լարերին, սկսած ամենաթափ լարից, վերջացրած ամենաբարակով: Լյոնկան ցնցվեց ու արագացրեց քայլերը: Միշտ, յերբ նա լսում եր պապի ուզելը, տհաճություն և ինչ-քոր ձանձրույթ եր զգում,



իսկ յերբ պապին մերժում եյին, նա նույնիսկ վախենում եր, սպասելով, վոր պապիկը հենց հիմի պիտի լաց լինի:

Նրա ականջին դեռ հասնում եյին պապի ձայնի դողդոջուն և խղճուկ յելևեջները, վոր յերերովում եյին ստանիցայի քնկոտ ու տոթ ողում։ Շուրջն ամեն ինչ այնքան լուռ եր, կարծես գիշեր լիներ։ Լյոնկան մոտեցավ ցանկապատին ու նստեց փողոցի վրա կախված բալի ճյուղերի ստվերում։ Ինչ վոր տեղ հնչյուն տղտղում եր մեղուն... Վայր իջեցնելով տոպրակն ուսերից, Լյոնկան զրեց նրա վրա իր գլուխը և, մի փոքր դիտելով յերկինքն իր յերեսի վրա կախված սաղարթի միջով, պինդ քնեց, ծածկված անցորդների հայացքից՝ խիտ մոլախոտերով ու ցանկապատի վանդակավոր ստվերով։

Արթնացավ նա ողում տարուբերվող տարորինակ ձայներից։ Յերեկոն մոտ եր և ողն արդեն ցրտել եր։ Մեկը լաց եր լինում իրենից շատ մոտիկ։ Լալիս եր մանկական լացով—բարձրածայն ու անդադար։ Հեկեկանքների հնչյունները նվազում եյին բարակ, ցածրիկ յեղանակով և հանկարծ հետո նորից և նոր ուժով բռնկում եյին ու հոսում, անընդհատ մոտենալով նրան։ Նա բարձրացրեց գլուխն ու մոլախոտերի վրայով նայեց ճանապարհին։

Այդտեղով գնում եր մի յոթ տարեկան աղջիկ, մաքուր հագնված, կարմրած և արտասուբից ուռած յերեսով, վորը նա հաճախակի սրբում եր սպիտակ շրջազգեստի վեշով։ Փնում եր նա դանդաղ, չըփչըփացնելով բոբիկ վոտքերը ճանապարհի վրա, մանձր փոշի բարձրացնելով, և յերեկի չգիտեր, թե ուր և ինչի՞ համար ե գնում։ Նա մեծ, սև աչքեր ուներ, վոր այժմ նեղացած եյին, տխուր և խոնավ։ Փոքրիկ, բարակ, վարդագույն ականջները

չարաճճիորեն նայում եյին շագանակագույն մազերի փնջերի տակից, վոր ցրիվ եյին յեկել ու թափվել ճակատի, թշերի և ուսերի վրա։

Նա թվաց Լյոնկային շատ ծիծաղելի, չնայած իր արտասուբներին, – ծիծաղելի և ուրախ... Զարաճճին ե, յերեկի։

— Դու ի՞նչ ես լաց լինում, – հարցրեց նա կանգնելով վոտքի, յերբ նա հավասարվել եր նրան։

Աղջիկը ցնցվեց ու կանգ առավ, միանգամից դադարելով լաց լինել, բայց դեռևս կամաց հեծկըլտալով։ Հետո, յերբ նա մի քանի վայրկյան նայեց նրան, նրա շրթունքները նորից գողացին, յերեսը կնճոռավեց, կուրծքն ալեկոծվեց, և նորից բարձր լաց լինելով, գնաց։

Լյոնկան զգաց, թե ինչպես մի բան սեղմվեց նրա ներսում, և հանկարծ նույնպես գնաց նրա յետերից։

— Դե, մի լաց, ե։ Մեծ ես արդեն – ամնթ ե, – խոսեց նա դեռ նրան չհասած և հետո, յերբ հավասարվեց նրան, նայեց յերեսին ու նորից հարց տվեց՝ Սխըր, ինչու յես եսպես լաց լինում...։

— Հա-ա ... – յերկարացրեց աղջիկը։ – Վոր դու լինեյիր... – և հանկարծ նստեց ճանապարհի վրա՝ փոշու մեջ, ծածկելով յերեսը ձեռքերով, և հուսահատ նվաց։

— Ե՞ն, – արհամարհանքով թափ տվեց ձեռքը Լյոնկան։ – Կնիկ։ Կնիկ ես, վոր կաս։ Թյու, ես ինչ բան ե։

Բայց դա չոգնեց վոչ իրեն, վոչ ել աղջկան։ Նայելով նրա բարակ, վարդագույն մատների արանքից մեկը մյուսի յետերից գլորվող արտասուբի կաթիլներին, Լյոնկան նույնպես տիրեց և ցանկացավ լաց լինել։ Նա կուացավ գեպի աղջիկը, հազիվ դիպավ նրա մազերին. բայց իսկույն և յեթ,

վախենալով իր համարձակությունից, ձեռքը յետ
քաշեց: Աղջիկն անընդհատ լալիս երև կոչինչ չեր
ասում:

— Լսիր,—մի պահ լոելուց հետո, սկսեց Լյոն-
կան, խիստ պահանջ զգալով ոգնելնրան: — Ինչ կա,
ախր, ծեծել են զուցե: Դե, կանցնի, հա: Ասենք,
չլինի ուրիշ բան կա, դու ասա, աղջի, հը:

Աղջիկը, ձեռքերը յերեսին պահած, տխուր
թափահարեց գլուխն ու, վերջապես, հեկեկանքնե-
րի միջից դանդաղ պատասխանեց նրան, թոթվե-
լով ուսերը՝

— Թաշկինակս եմ... կորցրել: Ապիս շուկայից
եր բերել... կապույտ, ծաղկավնը. իսկ յես կապեցի
գլուխս—ու կորցրի:— Յեվ նորից լաց յեղափ, ավե-
լի ուժգին ու բարձր, հեծկլտալով ու տնքացող
ձայնով բացականչելով տարորինակ՝ ո-ո-ո:

Լյոնկան զգաց, վոր ինքն անզոր ե նրան ոգ-
նելու և, վախվխորած մի կողմ քաշվելով, մտա-
խոհ ու տխուր նայեց մթնած յերկնքին. Ծանր
տպավորություն եր թողել այդ բանը նրա վրա և
նա սաստիկ խղճում եր աղջկան:

— Մի լաց... գուցե կգտնվի...— կամացուկ շը-
շնջաց նա, բայց նկատելով վոր աղջիկը չի լսում
նրա մխիթարանքին, ավելի հեռացավ նրանից,
մտածելով, վոր յերկի, նորից նա մի լավ կուտի
այդ կորուստի համար: Իսկույն և յեթ նրան պատ-
կերացավ, վոր հայրը, մեծ ուսե մի կազակ, դնքում
ե նրան, իսկ աղջիկը, կուլ տալով արտասուրները
և ամբողջ մարմնով դողալով վախից ու ցավից,
թափալում ե հոր վոտքերի տակ...

Նա վեր կացավ ու հեռացավ աղջկանից, բայց,
մի հինգ քայլ գնալուց հետո, նորից արագ շուռ
յեկավ, կանգնեց նրա առջև, սեղմ վելով ցանկապա-



— Թաշկինակս եմ... կորցրի: Առիս տուխալից եր քերել...

տին, և աշխատում եր վորսե փաղաքական ու բարի բան հիշել...

— Ճանապարհից դնւրս գայիր, աղջի: Դե, հերիք ե լաց լինես, ելի: Գնա տուն, ասա վոնց վոր յեղել ե: Թե, կորցրել եմ... Դե ել ինչ հիմի...

Նա այդ բանն սկսեց ասել կամացուկ, ցավակցական ձայնով և, վերջացնելով վրդովված բացականչությամբ, ուրախացավ, տեսնելով, վոր նաբարձրանում ե գետնից:

— Այ, եսպես լավ ե.—Ժպտալով ու աշխույժ շարունակեց նա: — Դե, հիմի գնա: Ուզում ես յերեզ հետ գամ և ամեն ինչ պատմեմ: Յես քո կողմից կիխեմ, մի վախեցի:

Յեվ Լյոնկան հպարտ թոթվեց ուսերը, նայելով իր շուրջը:

— Պետք չի... — շնչաց աղջիկը, դանդաղ թափ տալով փոշին շորերի վրայից և միշտ հեծկլտալով:

— Թե չե — գամ, հը. — լի պատրաստակամությամբ բարձրածայն հայտարարեց Լյոնկան ու յետավեց կարտուզն ականջի վրա:

Հիմա նա կանգնած եր նրա առջև, վոտքերը լայն չոած, վորից նրա վրայի ցնցոտիները տարուքերվեցին ինչ վոր խիզախ շարժումով: Նա ամուր թխկացնում եր փայտը գետնին և համառորեն նայում աղջկան, իսկ նրա մեծ-մեծ ու տիուր աչքերը փայլում եյին մի հպարտ ու խիզախ զգացմունքով:

Աղջիկը կողքանց նայեց նրան, արտասուքները քսելով յերեսին, և, նորից հոգոց հանելով, ասաց՝

— Չի հարկավոր, մի արի.. Մերս չի սիրում աղքատներին:

Յեվ հեռացավ նրանից, յերկու անգամ յետնայելով:

Զանձրույթը տիրեց Լյոնկային: Նա աննկա-

տելի դանդաղ շարժումներով փոխեց իր վճռական հոխորտացող դիրքը, նորից կորացավ, հանդարտվեց և, գցելով մեջքին եր տոպրակը, վոր մինչև հիմա կախված եր նրա թերթից, կանչեց աղջկա յետեից, յերբ նա արդեն ծածկել եր նըբանցքի վորանի յետեկը...

— Գնաս բարի...

Սղջիկն առանց կանգ առնելու շուռ յեկավ դեպի նա և անհայտացավ:

Մոտենում եր յերեկոն, և ոդում կանգնած եր այն առանձնահատուկ ծանր տոթը, վոր փոթորիկ ե նախազուշակում: Արեն արդեն ցածր եր կանգնած, և բարդիների գագաթները ներկվել եյին թեթև կարմրությամբ: Բայց նրանց սաղարթը շըջապատող յերեկոյան ստվերների շնորհիվ, այդ բարձրահասակ ու անշարժ բարդիները գարծան ավելի խիտ, ավելի բարձր... Յերկինքը, նրանցից վերև, նույնպես մթնում եր, դառնում թափշա և կարծեսի խնում եր ավելի ցած՝ դեպի յերկիրը: Ինչ-վոր տեղ հեռվում, խոսում եյին մարդիկ և ինչ-վոր տեղ ավելի հեռուն, բայց մյուս կողմում — յերգում եյին: Այդ ձայները, վոր ցածր եյին, բայց թափշում եր, նույնպես համակած եյին տոթով:

Լյոնկայի ձանձրույթն ավելի սաստկացավ և նույնիսկ սկսեց վախենալ ինչ վոր բանից: Նա ուզեց գնալ պապի մոտ, նայեց իր շուրջը և արագ տուած գնաց նրբանցքով: Վողորմություն խնդրել նա չեր ուզում: Նա գնում եր և զգում, վոր իր կրծքում սիրտը տրոփում ե ավելի հաճախ ու հաճախ, և, վոր նա առանձնապես ծուլանում ե գնալ և մտածել.. Բայց աղջիկը նրա հիշողությունից դուրս չեր գալիս, և նա միտք եր անում՝ ինչ պատահեց այժմ նրա հետ: Թե վոր նա հարուստ տանից ե, նրան կծեծեն՝ բոլոր հարուստները ժլատ

Են: Իսկ թե վոր աղքատ ե, ապա գուցե և չծեծեն: Աղքատ տներում յերեխաներին ավելի շատ են սիրում, վորովհետև նրանցից աշխատանք են սպասում: Մեկը մյուսի յետեկից մտքերը շարժվում եյին նրա գլխում, և տանջող ու կրծող ձանձրութի զգացմունքը, վոր ստվերի նման ուղեկցում եր նրա մտքերին, ըոպե առ ըոպե դառնում եր ավելի ծանր, ավելի ու ավելի յեր համակում նրան:

Յեվ յերեկոյի ստվերները դառնում եյին ավելի խեղղող, ավելի թանձր: Լյոնկային հանդիպում եյին կազակներ ու կազակուհիներ և անցնում մոտով, ուշադրություն չդարձնելով նրա վրա, քանի վոր արդեն բոլորը սովորել եյին Խուսաստանից յեկող սոված մարդկանց այդ հոսանքին: Նա նույնպես ծուլորեն սահում եր աղոտ հայացքով նրանց կուշտ, խոշոր կերպարանքների վրայով և արագ գնում եր դեպի յեկեղեցին, վորի խաչը փայլում եր նրա առջևում ծառերի յետեր:

Դեպի նա շարժվում եր վերադարձող հոտի աղմուկը: Ահա և յեկեղեցին, ցածրիկ և լայն, ներկված կապույտ ներկով: Շուրջը պատել եյին բարդիները, վորոնց զագաթներն աճել, բարձրացել եյին յեկեղեցու խաչերից վեր, վոր վողողված եյին վերջալույսի շողերով և փայլում եյին կանաչ տերեների միջից վարդագույն վոսկով:

Ահա գալիս եւ և պապը դեպի յեկեղեցու դպիթը, կոացած տոպրակի ծանրության տակ, և դիտում ե իր չորս կողմը, ձեռքը դնելով ճակատին: Պապի յետեկից ծանր, յերերուն քայլվածքով գալիս ե ստանիցայի կազակներից մեկը, ճակատի վրա իջեցրած զղակով և փայտը ձեռքին:

— Հը, տոպրակդ դատարկ ե, — հարցրեց պապը, մոտենալով թոռանը, վոր կանգ եր առել յեկեղեցու առջեւ ու սպասում նրան: — Իսկ, այ, յես ինչ-

քան եմ հավաքել, — և, տնտնքալով, նա ուսերից գցեց գետին իր քաթանե մինչև բերան լիքը տոպրակը: — Ուհ... Լավ են եստեղ տալիս, ենքան լավ... Հը, իսկ դժւ ինչույես եսպես փքիած:

— Գլուխս ցավում ե... — կամաց արտասանեց Լյոնկան, նստելով գետին, պապի կողքին:

— Համ... հոգնել ես... հալ չունես... Այ, հիմա կը գնանք գիշերելու: Կազակի անունը վհնց եր, հը...

— Անդրեյ Չորնիյ:

— Հենց եսպես ել կհարցնենք՝ իսկ վորտեղ ե, ասեօ, Չորնիյ Անդրեյը: Այ, մարդ ե գալիս ես կողմ... Բաս... Լավ ժողովուրդ են, կուշտ... և բոլորը ցորենի հաց են ուտում: Բարե՛, բարի մարդ:

Կազակը բոլորովին մոտեցավ նրանց և դանդաղ պատասխանեց պապի վողջույնին:

— Զեղ ել բարեւ:

Ապա, լայն չոելով վոտքերն ու հառելով խոշոր, վոչինչ չարտահայտ աչքերը մուրացկաների վրա, լուռ քորեց իրեն:

Լյոնկան նայում եր նրան զննող հայացքով, պապը թարթում եր իր ծեր աչքերը հարցականորեն, կազակն անընդհատ լուռ եր և, վերջապես, հանելով լեզուն մինչև կեսը, սկսեց լեզվով վորուալ իր բեխի ծայրը: Հաջող վերջացնելով այդ գործը, նա բեխը ներս քաշեց բերանը, ծամեց մի քիչ, նորից դուրս հրեց բերնից լեզվով և, վերջապես, ընդհատեց լուռթյունը, վոր արդեն դառնում եր անտանելի, ծուլորեն արտասանելով՝

— Դե, — գնանք հավաքատեղին:

— Ինչի՞ համար, — ցնցվեց պապը:

Լյոնկայի ներսում ինչ վոր բան դողդողաց:

— Դե, հարկավոր ե... հրամայված ե: Դե համ:

Նա շուռ յեկամ մեջքը գարձնելով դեպի նրանց և ուղեց գնալ, բայց յետ նայելով և տեսնելով,

վոր նրանք յերկուսով ել տեղից չեն շարժվում,
նորից և արդեն բարկացած բղավեց՝
— Հը՛, ինչ յեղավ ձեզ...

Այդ ժամանակ պապն ու Լյոնկան արագ գնացին նրա յետելից:

Լյոնկան համառորեն նայում եր պապին և, տեսնելով, վոր նրա շրթունքներն ու գլուխը դողում են, և վոր նա, վախվխորած նայում ե իր շուրջն ու արագ ինչ վոր բան ե վորոնում իր ծոցում, զգում եր, վոր պապն ինչ վոր մի բան ե արել, ինչպես և այն ժամանակ Տոմանում։ Նա սկսեց վախենալ, յերբ պատկերացրեց իրեն Տոմանի դեպքը։ Այստեղ պապը սպիտակեղեն եր թոցրել մի բակից և նրան բռնեցին գողացածը ձեռքին։

Ծիծաղում եյին, հայրոյում, ծեծում եյին նույնիսկ և, վերջապես գիշերը վոնդեցին ստանիցայից։ Նրանք գիշերեցին պապի հետ ինչ վոր տեղ, նեղուցի ափին, ավազի վրա, և ծովս ամբողջ գիշերն ահեղ գոռգոռում եր... Ավազը ճոճում եր, յերբ ալիքների հոսանքը վրա յեր վազում ու շարժում այն... Իսկ պապն ամբողջ գիշերը տնքում եր ու շնչալով աղոթում աստծուն, իրեն գող անվանելով և թողություն խնդրելով։

— Լյոնկա...

Լյոնկան ցնցվեց, յերբ պապը բոթեց նրա կողքը, և նայեց պապին։ Նրա դեմքը ձգվել եր, ավելի չորացել, գորշացել և ամբողջովին դողում եր։

Կազակը գնում եր առջեից, հինգ բայլի վրա, ծխում եր ծխամորճը, թոցնում փայտով կոտակի գլխիկները և չեր ել նայում նրանց։

— Ա՛ռ մի, վերցրու... գցիր... մոլախոտի մեջ... Տեղն ել իմացիր, վորտեղ ես գցում, վոր վերցնենք հետո... — հազիվ լսելի փափսաց պապը և, ա-

ռանց կանգ առնելու քիփ սեղմվելով թոռանը, կոխեց նրա ձեռքն ինչ վոր մի գնդած շորի կտոր։ Լյոնկան քաշվեց մի կողմ, ցնցվելով վախից, վոր մի անգամից նրա ամբողջ եյությունը լցրեց սառնությամբ, և մոտեցավ ցանկապատին, վորի կողքովը խիտ աճած եր մոլախոտը։

Լարված նայելով ուղեկցող կազակի լայն թիկունքին, նա պարզեց ձեռքը դեպի մի կողմ և, նայելով ձեռքի իրին, գցեց այն մոլախոտի մեջ։

Ընկնելիս, շորը բացվեց և Լյոնկայի աշքերում յերեաց կապույտ ծաղկավոր թաշկինակը, վոր իսկույն և յեթ ծածկվեց փոքրիկ լաց լինող աղջկա պատկերով։ Նա կանգնեց նրա առջև, վոնց վոր կենդանի լինի, իրենով ծածկելով կազակին, պապին և ամբողջ շրջապատը... Նրա հեկեկանքների հնչյունները նորից պարզ լսվեցին Լյոնկայի ականջներում, և նրան թվաց, վոր նրա առաջ գետնի վրա յեն թափվում արտասուքի պայծառ կաթիւները...։

Այդ գրեթե անգիտակցական գրության մեջ, նա պապի յետելից զնաց հավաքատեղին։ Նա լսում եր խուլ գվազը, վորի իմաստը հասկանալ չեր կարողանում և չեր ել ուզում, կարծես մշուշի ծով տեսնում եր, թե ինչպես պապի տոպլակից դուրս թափեցին կտորները՝ մեծ սեղանի վրա, և այդ կտորները, ընկնելով խուլ ու փափուկ, թըլխկթը խիստացնում եյին սեղանին... Ապա նրանց վրա կուացան բազմաթիվ գլուխներ բարձր գգակներով։ Գլուխներն ու գգակները խոժոռ եյին և մոայլ, ու, տարութերգելով, սպառնում եյին շուրջը տիրող մշուշի միջից ինչ վոր սարսափելի բանով... Հետո հանկարծ պապը, խոպոտ փնթփնթալով ինչ վոր մի բան, հոլի նման սկսեց պտտվել յերկու ուժեղ տըղամարդկանց ձեռքերում...։

— Զուր ե, քրիստոնյաներ... Մեղավոր չեմ,
աստված ե վկա, — սուր ճշաց պապը:

Լյոնկան, լալով, ընկավ հատակին:

Այդ ժամանակ մոտեցան և նրան: Բարձրացը-
րին, նստեցրին նստարանի վրա և խուզարկեցին
նրա փոքրիկ մարմինը ծածկող բոլոր ցնցոտիները:

— Դուրս ե տալիս Դանիլովսան, սատանի կնի-
կը, — աղմկեց մեկը, կարծես զարկելով Լյոնկայի
ականջներին իր թագ և բարկացած ձայնով:

— Գուցե թագցրել են մի տեղ, — ավելի բարձր
բղավեցին ի պատասխան:

Լյոնկան զգում եր, վոր այդ բոլոր ձայները
կարծես խփում են նրա գլխին, և նա այնպիսի մի
սարսափ զգաց, վոր ուշը կորցրեց, հանկարծ, կար-
ծես, խորասուզվելով ինչ վոր սև փոսի մեջ, վորը
բաց եր արել նրա առջե իր անտակ յերախը:

Յերբ նա ուշքի յեկավ, նրա գլուխը դրած եր
պապի ծնկներին, նրա յերեսի վրա կուցել եր պա-
պի յերեսը, ավելի խղճուկ և խորշոմած, քան յեր-
բե և պապի վախեցած թարթող աշքերից ընկնում
են նրա, Լյոնկայի ճակատի վրա մանրիկ պղտոր
արտասուրները և սաստիկ խտղտում, գլորվելով
թշերի վրայից վզի վրա...

— Աչքերդ բացիր, բալա ջան... Արի գնանք
եստեղից: Գնանք: Բաց թողին անիծվածները:

Լյոնկան վեր կացավ, զգալով. վոր նրա գլխի
մեջ ինչ վոր մի ծանր բան ե լցված, և վոր գլու-
խը, հենց այն ե, վայր պիտի ընկնի ուսերի վրա-
յից... Նա բռնեց գլուխը ձեռքերով և սկսեց տա-
րութերել մի կողմից մյուսը, կամաց տնքալով:

— Ցափում ե գլուխդ: Իմ բալաս... տանջեցին
նրանք ինձ ու քեզ... զազաններ: Խանչալն ե կոր-
ցրել, ել վոնց կլիներ, մեկ ել աղջիկը թաշկինակ
ե կորցրել, դե դրա համար ել թափկեցին վրա-

ներս... Վայ, տեր աստված... Ինչու յես եսպես
պատժում մեզ...

Պապի գողոացող ձայնը կարծես չանգոռում եր
Լյոնկային և նա զգում եր, վոր նրա մեջ բոցա-
վառվում է մի սուր կայծիկ, հարկադրելով նրան
հեռու քաշվել պապից: Յետ քաշվեց ու նայեց
շուրջը...

Նրանք նստել եյին ստանիցայից դուրս, ան-
ճոռնի կաղամախում ճյուղերի խիտ ստվերի տակ: Ար-
դեն գիշեր եր, լուսինը դուրս յեկավ, և նրա կաթ-
նաարձաթավուն լույսը, գարձրել եր այն կարծես
ավելի նեղ, քան ցերեկն եր, ավելի նեղ և ավելի
ամայի, տխուր:

Հեռվից, յերկնքի հետ միացած դաշտերի կողմից
բարձրանում եյին ամպերն ու կամաց լողում դաշ-
տի վրայով, ծածկելով լուսնյակը և թանձը ստվեր-
ներ գցելով գետնի վրա: Ստվերները քիփ պառ-
կում եյին գետնին, դանդաղ մտախոհ սողում նրա
վրայով և հանկարծ կորչում, կարծես թաղվելով
գետնի տակ նրա ճեղքերի միջով արեի ճառագայթ-
ների կիզիչ հարվածներից... Ստանիցայից ձայներ
եյին գալիս և տեղ-տեղ բռնկվում եյին կրակները,
վոր աստղերի հետ վոխաղարձ աշքով եյին անում
իրար:

— Գնանք, բալաս... հարկավոր ե գնալ, — ասաց
պապը:

— Նստենք մի քիչ ել... — ցածր ձայնով ասաց
Լյոնկան:

Նրա դուրը գալիս եր դաշտը: Յերեկը, դաշտում
քայլելիս, նա սիրում եր նայել գեպի առաջ, այն-
տեղ, վորտեղ յերկնքի կամարը հենվում ե այդ
դաշտի յայն կրծքին... Այնտեղ նա պատկերացնում
եր մեծ հրաշալի քաղաքներ, բնակված շտեսնաված

բարի մարդկանցով, վորոնցից կարիք չի լինի հաց խնդրել, — ինքները կտան, առանց խնդրելու... իսկ յերբ դաշտը, անընդհատ բացվելով նրա աչքերի առաջ, հանկարծ դուրս եր հանում իր միջից արդեն իրեն ծանոթ ստանիցան, վոր նման եր իր շենքերով ու մարդկանցով այն բոլոր ստանիցաներին, վորոնք նա առաջուց տեսել եր, տիրությունը պատում եր նրան և նա իրեն վիրավորված եր զգում այդ խափեռթյան համար:

Յեվ այժմ նա մտախոհ նայում եր հեռուն, վորտեղից դանդաղ դուրս եյին սողում ամպերը Նրան թվում եր, վոր դրանք նման են այն քաղաքի հազարավոր խողովակների ծիփն, վոր նա այնքան ուզում եր տեսնել...

Լյոնկան ընդհատվեց պապի չոր հազով:

Լյոնկան դիտող հայացքով նայեց պապի արտասուբներով թրջված յերեսին: Նա ազահորեն ներս եր ծծում ողբ: Լուսավորված լուսնի լույսով և ծածկրված գդակի ցնցոտիներից, հոնքերից ու մորուքից ընկնող ստվերներով, այդ յերեսը, իր ջղաձգորեն շարժվող բերանով և լայն չուած աչքերով, վոր փայլում եյին ինչ վոր զսպված հրճվանքով, սարսափելի յեր, խղճալի, և առաջացնելով Լյոնկայի մեջ այն իրեն համար նոր զգացմունքը, ստիպում եր նրան հեռանալ պապից...

— Նստենք դեռ, նստենք... — Փնթինթում եր նա և, հիմար քմծիծաղը դեմքին, ինչ վոր բան եր վորոնում ծոցում:

Լյոնկան շուռ յեկավ ու նորից սկսեց նայել հեռուն:

Լյոնկա, նայիր մի, — հանկարծ խնդաց պապը հրճվանքով և, ամրողջովին կուչ գալով խեղղող հազից, պարզեց դեպի թոռն ինչ վոր մի յերկար ու

փայլուն բան: — Արծաթնվ ե պատած, արծաթ ե, չեմ... հիսուն մանեթ արժի...

Նրա ձեռքերն ու շրթունքները դողում եյին ագահությունից ու ցավից, և ամբողջ դեմքը ջղաձրգվեց:

Լյոնկան ցնցվեց ու հրեց նրա ձեռքը:

— Պահիր շնուտ.. Վայ, պապի, թագցրիւ, — պաղատական տօնով շշնջաց նա, արագ դիտելով շուրջը:

— Ե՞ս, ի՞նչ ե, սարսապի պես վախենում ես, բայս... Ներս նայեցի լուսամուտից, իսկ սա կախված եր... Յես ել՝ հնապ, վերցրի ու վեշիս տակ դրի... և հետո ել թփերում պահեցի: Յերբ ստանիցայից գալիս եյինք. յես իբր գդակս վեր զցեցի, կռացա ու վերցրի խանչալը... Հիմարի գլուխներ են նրանք: Թաշկինակս ել վերցրի, այ, տես վորտեղ ե:

Նա դողդոջուն ձեռքերով դուրս քաշեց թաշկինակն իր ցնցոտիների միջից ու թափահարեց այն Լյոնկայի աչքերի առաջ:

Լյոնկայի աչքերի առաջ պատառուտվեց մշուշի վարագույրը և ցցվեց մի այսպիսի պատկեր՝ նա և պապն արագ, վորքան ուժ ունեն, գնում են ստանիցայի փողոցով, խուսափելով հանդիպող մարդկանց հայացքներից, գնում են վախվիելով, և Լյոնկային թվում եր, թե ամեն սեկը, ով ուզի, իրավունք ունի ծեծել նրանց յերկսին ել, թքել նրանց վրա, հայնոյել... Ամբողջ որջապատը, — ցանկապատները, տները, ծառերը, — ինչ վոր տարորինակ մշուշի մեջ տարութերվում են կարծես քամուց... և շաշում են ինչ վոր դաժան, բարկացկոտ ձայներ... Այդ ծանր ճանապարհն անվերջ յերկար ե ստանիցայից դաշտ դուրս գալու տեղը չի յերևում՝ տատանվող տների խիտ զանգվածի յետերից: Իսկ այդ տները մեկ մոտենում են նրանց, կարծես

ցանկանալով տրորել նրանց, մեկ հեռանում ինչ
վոր տեղ ծիծաղելով նրանց յերեսին իրենց լու-
սամուտների մութ բծերով... Յեկ հանկարծ մի
լուսամուտից լսվում ե հնչյուն ձայնը՝ «գողեր,
գողեր, գող, գողի տղա»... Լյոնկան գաղտազողի հա-
յացք ե նետում դեպի այդ կողմը և տեսնում ե լու-
սամուտում այն աղջկան, վորին մի քիչ առաջ նա
տեսել եր լաց ինելիս և ուզում եր պաշտպանել...
Աղջիկը վորսաց նրա հայտացքը և լեզու հանեց նրան,
իսկ նրա կապույտ աշխիները պապղում եյին շա-
րությամբ ու ասեղի նման ծակում Լյոնկային:

Այդ պատկերը կենդանացավ նրա հիշողության
մեջ և մի ակնթարթ անհայտացավ, թողնելով իրե-
նից հետո չար ժպիտը, վորը նա շպրտեց պապի յե-
րեսին:

Պապն անընդհատ ասում եր ինչ վոր բան, ընդ-
հատելով իրեն հազոր, թափահարում եր ձեռքերը,
ցնցում գլուխը և սրբում քրտինքը, վոր խոշոր կա-
թիներով գուրս եր գալիս նրա յերեսի կնճիռների
մեջ:

Ծանր, պատառոտված ու բուլաներով պատած
ամպը ծածկեց լուսինը և Լյոնկան գրեթե չեր տես-
նում պապի յերեսը... Բայց նա կանգնեցրեց նրա
կողքին լացող աղջկան, տպափորելով իր առջև նրա
պատկերը, և մտքում, կարծես թե, չափեց նրանց
յերկսին: Անզոր, դոդոացող, ագահ և պատառոտ-
ված պապը նրա կողքին, այն աղջկա, վորին նա
միրափորել եր, վորը լաց եր լինում, բայց առողջ
եր, թարմ, գեղեցիկ, այդ պապը թվաց նրան ան-
պետք և գրեթե նույնքան չար և զգիւլի, վորքան
և կաշշեյր հեքյաթում: Ինչպես կարելի յե այդպիսի
բան, ինչի համար եր նա նեղացրել աղջկանը: Նա
պապի հարազատը չի:

Իսկ պապը դոդում եր՝

— Այ, թե մի հարյուր մանեթ հավաքեյի, հա ..
ենքան հանգիստ կմեռնեյի, վոր...

— Դե...— հանկարծ ինչ վոր բան բռնկվեց Լյոն-
կայի ներսում: — Սնւս անեյիր, մի... մեռնեյիր,
ելի, մեռնեյիր .. իսկ, վոր չես մեռնում, այ... գո-
ղություն ես անում... — Ճաց Լյոնկան և հանկարծ,
ամբողջովին դողալով, թռավ վոտքի վրա: — Քավ-
թառ գնդ ես գու... ու-հւ-հ... — և սեղմելով փոք-
րիկ, չոր բռունցքը, նա թափահարեց այն պապի
քթի առաջ և նորից, ծանր նստեց գետնին, շարու-
նակելով ատամների արանքից՝ Յերեխից գողա-
ցավ... Այ, թե ինչ լավ ե... ծերացել ե, ելի ձեռ
չի քաշում... Ել են աշխարհում քեզ թողություն
չի լինի դրա համար...

Հանկարծ ամբողջ դաշտը վեր ու վայր յեղավ
և վողողվեց աչք կուրացնող կապույտ լույսով,
լայնացավ... Նրան պատող մշուշը շարժվեց ու ան-
հայտացավ մի ակնթարթով... Թնդաց կայծակի վո-
րոտը և, դղրդալով, գլորվեց գաշտի վրայով, ցըն-
ցելով թե այդ գաշտը, և թե յերկինօր, վորի վրա-
յով հիմա սլանում եր սև ամպերի թանձը խումբը:
Լուսինը թաղվել եր այդ ամպերի մեջ:

Մթնեց: Հեռու, ինչ վոր տեղ, արդեն լուռ,
բայց ահեղ, փայլատակեց կայծակը և մի վայր-
կյան հետո նորից թույլ մոնչաց վորոտը... Հետո
տիրեց լուռթյուն, վորը, կարծես, վերջ չեր ունե-
նալու:

Լյոնկան խաչակնը եր յերեսը. Պապը նստած
եր անշարժ և լուռ, կարծես նա ձուլվել եր ծառի
բնին, վորին հենվել եր նա իր մեջքով:

— Պապի...— շնչաց Լյոնկան տանջալից սար-
սափով սպասելով շանթի մի նոր վորոտի: — Գնանք
ստանիցա:

Յերկինքը նորից ցնցվեց և, նորից բռնկվելով

կապույտ բոցով, նետեց յերկըի վրա հզոր մետաղյա հարգածը: Կարծես թե յերկաթյա հազարավոր թերթեռ թափում եյին գետին, խփելով իրար: — Պապի... — բղավեց Լյոնկան:

Նրա աղաղակը, վորոտի արձագանքից խլացած, հնչեց, ինչպես մի հարգած փոքրիկ, կոտրված զանգին:

— Հը՛, ինչ ե... վախենմամ ես .. — խոպոտ ձայնով արտասանեց պապը, առանց շարժվելու:

Սկսեցին ընկնել անձրեսի խոզոր կաթիլները, և նրանց խշոցը հնչում եր այնքան խորհրդավոր, կարծես թե նախազգուշացնում եր ինչ վոր մի բանի մասին... Հեռվում այդ խշոցը փոխվեց մի համատարած, լայնարձակ ձայնի, վորը լսելիս, թվում եր, թե մի հսկայական խողանակ քսում են չոր գետնին, — իսկ այստեղ՝ պապի և թոռան մոտ, ամեն մի կաթիլ, ընկնելով գետին, հնչում եր կարճ և ընդհատ և մեռնում եր առանց արձագանքի:

Կայծակի վորոտը քանի գնում մոտենում եր, և յերկինքն ավելի հաճախ եր բռնկվում:

— Չեմ գնա յես ստանիցա: Թող ինձ, քավթառ շանը, գողին... այստեղ անձրեը խեղդի... կայծակնել սպանի... — շնչառառ լինելով՝ ասում եր պապը: — Չեմ գնա... գնա մենակ... Այ, հրեն ստանիցան... գնա: Չեմ ուզում յես, վոր դու եատեղ նստես... հեռացիր... գնա, գնա, գնա...

Պատն արդեն բղավում եր խուլ և խզված ձայնով:

— Պապի... ներիր, — մոտենալով նրան, աղաչեց Լյոնկան:

— Չեմ գնա... Չեմ ների... Յնթ տարի յես քեզ խնամել եմ... ամեն ինչ քեզ համար... և ապրել եմ... քեզ համար: Ախր, ինձ ինչ ե հարկավոր... Չե, մեռնում եմ յես... Մեռնում եմ... իսկ դու

ասում ես — գող... ինչի՞ համար եմ գող՝ քեզ համար... քեզ համար ե եղ բոլորը... Այ առ... առ... վերցրներ... քո ապրուստի համար... քո կյանքի համար... հայաքել եմ... դե գողություն ել եմ արել... Սատված տեսնում ե եղ ամենը... Նա զիտի... վոր գողություն եմ արել... զիտի... Նա ինձ կպատժի: Նա չի վողորմա ինձ, քավթառ շանը... գողության համար: Արդեն պատժեց ել... Տեր աստված, պատժեցիր դու ինձ... հը՝, պատժեցիր... Յերեխայի ձեռքով ինձ սպանեցիր դու... Ճիշտ ե, տեր իմ... ճիշտ ե... արդարացի՛ յես դու, տեր աստված... Առ իմ հոգին... Վայ...

Պապի ձայնը փոխվեց ինչ վոր ականջ ծակող ձշոցի, վոր սարսափով լցրեց Լյոնկայի կուրծքը:

Կայծակների վորոտը, սասանելով դաշտն ու յերկինքը, դղրդում եր հիմա այնքան դղրդալից և շտապ, կարծես թե նրանցից յուրաքանչյուրն ուզում եր յերկրին ինչ վոր անհրաժեշտ, նրան հարկավոր մի բան ասել, և նրանք բոլորը, անցնելով իրարից, վունում եյին գրեթե առանց ընդհատումների: Կայծակներից պատառութեալ յերկինքը գողում եր, դողում եր և դաշտը, մերթ ամբողջովին բռնկվելով կապույտ կրակով, մերթ խորասուլվելով ցուրտ, ծանր ու նեղ խավարի մեջ, վորը տարորինակ կերպով, փոքրացնում եր դաշտը: Յերբեմն կայծակը լուսավորում եր հեռուն: Այդ հեռուն, կարծես թե, շտապով փախչում եր աղմուկից ու գոռոցից:

Թափիկեց անձրեն ու նրա կաթիլները պողպատի նման պապղալով կայծակի լույսի տակ, ծածկում եյին իրենցով ստանիցայի սիրալիր թարթող կրակները:

Լյոնկան նվազում եր սարսափից, ցրտից և հանցանքի ինչ վոր կրծող զգացմունքից, վոր առաջ

Եր յեկել պապի աղաղակից: Նա հառել եր իր առջև
լայնքացած աչքերը և, վախենալով թարթելնրանք
նույնիսկ այն ժամանակ, յերբ ջրի կաթիլները,
հոսելով նրա անձրեսից թրջված գլխի վրայից, ընկ-
նում եյին նրանց մեջ, ականջ եր դնում պապի
ձայնին, վորը խեղղվում եր հզոր հնչյունների
ծովում:

Լյոնկան զգում եր, վոր պապը նստած ե ան-
շարժ, բայց նրան թվում եր, թե նա պիտի կորչի,
հեռանա այստեղից ինչ վոր տեղ և թողնի նրան
այստեղ մենակ: Նա, իր համար աննկատելի կեր-
պով, հետզհետե մոտենում եր պապին և յերբ դի-
պավ նրան իր արմունկով, ցնցվեց, սպասելով, վոր
ինչ վոր սարսափելիք բան պիտի լինի...

Պատուելով յերկինքը, կայծակը լուսավորեց նը-
րանց յերկսին, իրար կողքի, կուշ յեկած, փոքրիկ,
գորոնց վրա ծառի ճյուղերի վրայից թափվում
եյին ջրի շիթերը...

Պապը թափահարում եր ձեռքն ողի մեջ և ան-
ընդհատ փնթփնթում եր մի բան, արդեն հոգնած
և շնչասպառ լինելով...

Նայելով նրա յերեսին, Լյոնկան աղաղակեց
վախից... Կայծակի կապույտ լույսի տակ այդ յե-
րեսը թվում եր մեռած, իսկ նրա վրա պտտվող
աղոտ աչքերը խելագարի աչքեր եյին:

— Պապի... գնանք... — ճշաց նա, զլուխը դեմ
անելով պապի ծնկերին:

Պապը կոացավ նրա վրա, գրկելով նրան իր
բարակ և փոսկրոտ ձեռքերով, ամուր սեղմեց իրեն
և, հուպ տալով նրան, հանկարծ վոռնաց ուժգին
և սուր, վորպես թակարդով բռնված մի գայլ:

Գրեթե խելագարված այդ վոռնոցից, Լյոնկան
դուրս պրծավ նրա գրկից, ցատկեց վոտքի վրա և
նետի պես սլացավ առաջ, աչքերը լայն բաց արած,



Պատուելով յերկինքը կայծակը լուսավորեց նրանց յերկուսին:

կայծակներից կուրանալով, վայր ընկնելով, վեր կենալով և ավելի ու ավելի խոր թափանցելով խավարի մեջ, վորը մերթ անհայտանում եր կայծակի կապույտ փայլից, մերթ նորից թանձր պատում եր վախից խելքը կորցրած տղային:

Իսկ անձնել, վայր թափելով, աղմկում եր այնքան ցուրտ, միալար, տաղտկալի: Յեվ թվում եր, թե դաշտում վոչինչ և յերբեք չկար, բայց անձրեն աղմուկից, կայծակի փայլից և նրա չարացած վորոտից:

Մյուս որն առավոտյան, ստանիցայից գուրս վազելով, տղաներն իսկույն վերադարձան յետ և տագնապ բարձրացրին ստանիցայում, հայտարարելով, վոր տեսան կաղամախու տակ յերեկվա մուրացկանին և վոր նրան, յերեկ մորթել են, վորովհետեւ նրա կողքին մի դաշույն եր վեր ընկած:

Յեվ յերբ ավագ կաղակներն յեկան նայելու, այդպես եր արդյոք, դուրս յեկավ, վոր այդպես չի ծերունին դեռ կենդանի յեր: Յերբ մոտեցան նրան, նա փորձեց վեր կենալ գետնից, բայց չկարողացավ: Նրա լեզուն բռնվել եր և նա բոլորին ինչ վոր բան եր հարցնում արտասվաթոր աչքերով և անընդհատ վորոնում եր նրանցով ամբոխի մեջ, բայց վոչինչ չեր գտնում և չստացավ վոչ մի պատասխան:

Յերեկոյան զեմ նա մեռավ, և թաղեցին նրան հենց այնտեղ, վորտեղ գտել եյին, կաղամախու տակ, գտնելով, վոր գերեզմանատանը նրան չպետք երաղել՝ առաջինը — նա ոտար եր, յերկրորդը — գող եր, իսկ յերրորդը — մեռավ առանց հաղորդման: Նրա մոտ ցեխի մեջ գտան դաշույնն ու թաշկինակը:

Իսկ յերկութե յերեք որ հետո գտնվեց և կան:

Դաշտային հեղեղատներից մեկի վրա, ստանիցայի մոտերքում սկսեցին պտտվել ազուավերի

խմբերը և յերբ գնացին այնտեղ նայելու, գտան տղային, վորը պառկել եր թերերը փոած, յերեսն ի վայր, ջրալի ցեխի մեջ, վոր մնացել եր անձրեկից հետո հեղեղատի հատակին:

Սկզբում վորոշեցին թաղել նրան գերեզմանատանը, վորովհետև նա զեռ յերեխա յե, բայց, միտք անելով, դրին պապի կողքին, նույն կաղամախու տակ: Հողի մի բլուր կազմեցին և նրա վրա մի կոպիտ քարե խաչ կանգնեցրին:



ՀՀ Ազգային գրադարան



NL0386367

архс 75 чпн.

254

5018

М. ГОРКИЙ
ДЕД АРХИП И ЛЕНЬКА
ГИЗ АРМ. ССР ЕРЕВАН